ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«____» _____ 2014թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 396-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 23-ի «Առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգը, գործունեության ոլորտների, որոնցում զբաղված անձինք ենթակա են առողջական վիճակի պարտադիր զննության, և բժշկական զննության ծավալի ու հաճախականության ցանկը, անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի, բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկը, անձին ժամանակավորապես աշխատանքի չթույլատրելու մասին որոշման ձևերը հաստատելու և ԼՂՀ կառավարության 2003թ. մայիսի 27-ի թիվ 169 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 396-Ն որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 21-րդ և 22-րդ կետերով.

«21. Սույն որոշման N 2 հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերում նշված անձանց, ինչպես նաև 4-րդ կետով նշված այն անձանց նկատմամբ, ովքեր արտադրական պրակտիկա են անցնում N 2 հավելվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված կազմակերպություններում, սանիտարական (բժշկական) գրքույկի առկայության և (կամ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լրացված լինելու նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը:

22. Սույն կարգի 21-րդ կետում նշված անձանց սանիտարական (բժշկական) գրքույկի բացակայության կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լրացված չլինելու դեպքում տվյալ անձինք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի որոշմամբ չեն թույլատրվում աշխատանքի՝ մինչև խախտումը սահմանված կարգով վերացնելը:».

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ